11-րդ դասարան
Հայ գրականություն

Ակսել Բակունց

<<ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ>>

Ակսել Բակունց



1899

1937

Կան գրողներ, որոնց անունը տալիս անմիջապես պատկերացնում ես ուրույն ու անկրկնելի մի աշխարհ, որը թեև հավերժորեն եղել է նրանից առաջ և հավիտենորեն գոյություն կունենա նրանից հետո, բայց որն իր առանձնահատուկ գեղեցկություններով բոլորին հայտնի է նրանց անուն-նով և նրանց շնորհիվ: Բակունցի շնորհիվ հայ գրականության մեջ հա-վերժական գրանցում ստացավ զանգեզուրյան բնաշխարհը՝ իր հետ բե-րելով նախնական ու վայրի պատկերները, լեռներում ապրող պարզ ու անապական մարդկանց հոգու գեղեցկությունների ու լուռ ողբերգություն-ների



Ժամանակի մարդու կապը. << Ե'վ գյուղում, և' բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նույն ծառի միանման տերևներ են: Դրա հա-մար էլ խառնվում է ծերունու հիշողությունը: Գետն աղմկում է առաջվա հան-գով, նույն քարերն են և նույն քարե արծիվը: Քանի սերունդ է ապրել Բասուտա գետի մոտ, կարկատած թաղիքները թռել ցեխերի վրա, եղեգնով պատել վրան-ները, և ամեն գարնան, երբ Կաքավաբերդի լանջին բացվել է ալպիական մա-նուշակը, այծ ու ոչխարը քշել են բերդի լանջերը, պարկը պանրով լցրել ու ձմե-ռը կրծել կորեկ հաց և այծի պանիր>>:

Ծաղկափոշու մեջ թաթախ-
ված գունավոր բզեզին մա-
նուշակը ճոճք է թվում, աշ-
խարհը՝ ծիրանագույն բու-
րաստան։

Կաքավաբերդի գլխին
տարին բոլոր ամպ է նստում,
բերդի ատամնաձև
պարիսպները կորչում են
սպիտակ ամպերի մեջ, միայն
սևին են անում բարձր
բուրգերը։

Առաջին ձիավորը հնագետ էր, նա մոտենում էր այս ու այն քարին, կռա-նում, նայում, չափում, ինչ-որ գրում, ոտքով փորում հողի փլվածքը, բաց անում հողի տակ թաղված տաշած քարի ծայրը:

Նկարիչի աչքն անգղների պտույտի հետ էր, նրանց թևերի հզոր շարժումի, կեռ ու արնագույն կտուցների հետ: Ի՞նչ ահեղ թափ կար նրանց պտույտում: Մի պահ մատիտը ձեռքին մնաց և չնկա-տեց, թե ինչպես գլխարկը սահեց և ըն-կավ քարի վրա:

Հնագետի աշխարհը. << Հնագետը չէր տեսնում ո'չ մանուշակ, ո'չ խոտ: Նրա կոշիկները կրնկակոխ էին ա-նում խոտ ու ծաղիկ: Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկար ոչինչ կենդանի և ոչ մի *բզեզ>>:*

Նկարչի աշխարհը. << Ինչքան շատ ժամանակ էր անցել այն օրից: Եվ միթե հնարավոր է այդքան նման երկու դեմք, նույնիսկ նույն շրթունքները... Այն կինն էլ ուներ խշխշան շորեր, հագնում էր գորշ գույնի վերարկու, սև թավշե գլխարկ, որի երկար քորոցը նարնջագույն գլուխ ուներ: Հեռու էր, շատ հեռու: Գուցե Բասուտա գետը ուրիշ գետի հետ խառնվելով հասնում է այն ծովին, որի ափին՝ ավազի վրա, մի օր նստել էին կինը և նկարիչը:

Գյուղացու աշխարհը. << Հնձվորը միտք արեց, ուսը քորեց և դարձավ դեպի ձորը՝ հնձելու կորեկի արտը: Ու գնում էր ինքն իրեն խոսելով: Ինչ կլիներ, եթե ինքը գտներ գանձը: Քանի անգամ է նա նըստել հենց այն քարի վրա, որ տեղահան արեց ակնոցավորը: Եթե իմանար, ապա գանձերը կլինեին նրա արխալուղի գրպանում: Քանի կով կառներ...>>: Միտք էր անում հնձվորը, երբ նկատեց, որ կորեկի արտի կողքին է: Նա չուխան շպրտեց, չուխայի հետ էլ՝ ավելորդ մտքերը, մանգաղով զարկեց մի կապ կորեկ ու կտրեց>>:

Կաքավաբերդի երեք այցելուների վերադարձը. << Ձիերն իջնում էին Կաքավաբերդի քարափով դեպի Բասուտա ձորը: Ձիերի սանձից բռնած՝ իջնում էին երեք հոգի, որոնցից ամեն մեկը մտքերի մեջ հյուսում էր իր նախշը: Ճանապարհի երկու եզրին բուսել էին ալպիական մանուշակներ: Ֆետրե գլխարկով մարդը կռացավ, պոկեց մեկը և դրեց տետրի այն թերթի արանքը, որի վրա նկարված էր եռոտանին և այն բարակիրան կինը>>: